ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 01-Լ

«14» 01 2026թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ՀՀ գլխավոր դատախազության սահմանադրական կարգի հիմունքների, պետության և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալի 1 թափուր հաստիքը նույն վարչության ավագ դատախազի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանի 1-ին հավելվածի 2-րդ բաժնի 10.2-րդ գլխի 36.6-րդ կետի «Վարչության պետի տեղակալ 3» բառերը փոխարինել «Վարչության պետի տեղակալ 2», իսկ 36.7-րդ կետի «Վարչության ավագ դատախազ 3» բառերը՝ «Վարչության ավագ դատախազ 4» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**